

Լիլիթ Հր. Հովհաննիսյան
Պատմ. գիտ. թեկնածու

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ

Մաս առաջին: ՀՅ Դաշնակցությունը և Հայաստանի երկու
մասերի քաղաքական կարգավիճակի հարցը 1917
թվականին*

Բանալի բառեր – ՀՅ Դաշնակցություն, Արևմտյան Հայաստան, Արևելյան Հայաստան, Անդրկովկաս, ինքնավարություն, անկախություն, ազգերի ինքնորոշման իրավունք, Հ. Զավրիյան, Ռուսաստանի Ժամանակավոր կառավարություն, Հայկական հարց, Հայկական առանձին բանակային կորպուս:

Իր 1905 թ. «Կովկասյան նախագծի» մեջ և ապա 1907 թ. չորրորդ Ընդհանուր ժողովում վավերացված կուսակցության ծրագրում ՀՅ Դաշնակցությունը խնդիր էր դրել հասնելու Արևմտյան Հայաստանի լայն ինքնավարությանը՝ օսմանյան պետության սահմաններում, իսկ Արևելյան Հայաստանի համար ձեռք բերել ինքնավարություն Անդրկովկասի դաշնային հանրապետության կազմում, որը լինելու էր «Ռուսաստանի ֆեդերատիվ հանրապետության անբաժան մասը, կապած նրա հետ պետական ինքնապաշտպանութեան, դրամական սիստեմի, մաքսի և արտաքին քաղաքականութեան խնդիրներով»¹:

Ներքին բոլոր գործերում Անդրկովկասյան հանրապետությունը լինելու էր անկախ, ունենալու էր իր կենտրոնական պառլամենտը՝ ընտրված ընդհանուր, հավասար, ուղղակի, գաղտնի և համամասնական քվեարկության համակարգով, սեփական ներկայացուցիչներին Ռուսաստանի համապետական պառլամենտում, որոնք ընտրվելու էին վերոնշյալ սկզբունքներին համապատասխան: Անդրկովկասյան հանրապետությունը բաժանվելու էր ներքին լայն ինքնավարությամբ վրացական, հայկական և թաթարական վարչական միավորների՝ կանտոնների: ՀՅԴ-ն առաջարկում էր դրանց սահմանները որոշել՝ հաշվի առնելով ազգաբնակչության էթնիկական,

* Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին ընդառաջ «Պետականության մարտահրավերը» ընդհանուր խորագրի ներքո «Վէմ»-ը նախաձեռնում է ներկա հոդվածաշարի տպագրությունը, որը նպատակ ունի ընթերցողի համար նորովի բացահայտել Նոր Ժամանակներում Հայոց պետականության ձևավորման գործընթացի տարբեր կողմերը: Հոդվածն ընդունվել է տպագրության 19.01.2017:

¹ Հ.Յ.Դ. ծրագիր, Ժընևե, հրատ. «Իրօշակի», 1907, էջ 18:

տեղագրական, տնտեսական ու մշակութային առանձնահատկություններն՝ ըստ կարելիվույն միաձույլ համախմբումներ կազմելու համար²:

Ներկայացված նպատակները նույնությամբ հաստատվեցին ՀՅԴ ութերորդ Ընդհանուր ժողովում (1914 թ.), իսկ 1917 թվականին դրանք՝ քաղաքական նոր իրավիճակին համապատասխանող փոփոխություններով, իրենց արտացոլումը գտան Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմում գումարվելիք սոցիալիստական կուսակցությունների միջազգային կոնֆերանսին հղված ՀՅԴ հուշագրում³: Հայաստանի մասերից յուրաքանչյուրի ապագա քաղաքական կարգավիճակի հարցում առանձին մոտեցումների որդեգրումը բխում էր հայ ժողովրդի երկու հատվածներին պատմականորեն պարտադրված տարբերությունների հաշվառումից և բնավ չէր նշանակում, թե ՀՅԴ-ն արևելահայերին ու արևմտահայերին՝ իրենց խնդիրներով հանդերձ, հակադրում է միմյանց: Ընդհակառակը, այս դիրքորոշումը բխում էր նաև հայ ժողովրդի երկու հատվածների ու Հայաստանի երկու մասերի շահերի միջև առկա ընդհանրությունների գիտակցումից: Վերջիններս հնարավոր էր կարգավորել ու ներդաշնակել ոչ թե միմյանց ստորադասելու, այլ՝ ազգային խնդիրները զուգահեռաբար լուծելու միջոցով:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը ոգևորությամբ ընդունեց 1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակը, որի արդյունքում Ռուսաստանում տապալվեց ցարիզմը: Երկրում ստեղծված կենտրոնական գործադիր իշխանության նոր մարմինը՝ Ժամանակավոր կառավարությունը, ցարական իշխանություններից ժառանգած պետական բազմաթիվ խնդիրների լուծման համար որդեգրեց նոր, ժողովրդավարական սկզբունքներ: Մասնավորապես, Ռուսաստանի ազգային և արտաքին քաղաքականության հիմքում դրվեցին ազգերի ինքնորոշման հիման վրա հաշտության հասնելու, խղճի ազատության ու ազգային սահմանափակումների վերացման սկզբունքները: Դա իրական երաշխիք էր ազգերի ինքնորոշման և իրավահավասարության հենքի վրա լուծելու թե՛ ռուսական բազմազգ կայսրությունում կուտակված ազգային խնդիրները և թե՛ շարունակվող համաշխարհային պատերազմի ընթացքում գինագրավված տարածքների ու դրանց բնակչության քաղաքական կարգավիճակի հարցերը:

Ինչպես հայ ժողովրդի արևելյան հատվածի, այնպես էլ զանգվածային կոտորածների, տեղահանության ու բռնագաղթի հետևանքով հայրենազրկված, աշխարհով մեկ սփռված արևմտահայերի շահերը պաշտպանելու,

2 Տե՛ս նույն տեղում, էջ 17–23:

3 Սոցիալիստական կուսակցությունների միջազգային կոնֆերանսն իր աշխատանքները պետք է սկսեր 1917 թ. հուլիսի 8-ին, սակայն Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով առաջացած դժվարությունների և խոչընդոտների պատճառով կոնֆերանսի հրավիրումը նախ հետաձգվեց մինչև սեպտեմբեր, այնուհետև որոշվեց նախատեսված թվականին այն չգումարել: Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները հրաժարվել էին կոնֆերանսին մասնակցելու նպատակով անցագրեր տրամադրել իրենց քաղաքացի սոցիալիստ պատգամավորներին: Ստոկհոլմ էին ժամանել միայն Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Օսմանյան կայսրության և մի շարք չեզոք ու պատերազմին չմասնակցող պետությունների պատվիրակները: Կոնֆերանսում ՀՅ Դաշնակցությունը ներկայացնելու էր Սոցիալիստական կուսակցությունների միջազգային բյուրոյի անդամ Մ. Վարանդյանը, բայց քանի որ նա Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարությունների առջև արևմտահայերի շահերը պաշտպանելու հարցում Պողոս Նուբարի գլխավորած Ազգային պատվիրակությանն աջակցելու նպատակով գտնվում էր Փարիզում, իբրև ՀՅԴ լիազոր ներկայացուցիչ Ստոկհոլմ մեկնեց կուսակցության հիմնադիրներից Ռոստոմը (Ստեփան Զոյանը): Տե՛ս Նիլթեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար, ԺԲ. հատոր, Պեյրույթ, 2016, էջ 263:

Հայաստանի երկու մասերի քաղաքական կարգավիճակը հայ ժողովրդի հետագա անվտանգ զարգացման հրամայականին համապատասխանեցնելու գործում ՀՅԴ դիրքորոշումն ու գործունեությունը տվյալ պատմաշրջանում ունեին որոշիչ նշանակություն: Հարցն այն է, որ ՀՅԴ-ն լայն կազմակերպական ցանց ունեցող և Մեծ եղեռնից հետո Արևմտյան Հայաստանում իր գործունեությունը շարունակող միակ ազգային կուսակցությունն էր, իսկ Անդրկովկասում՝ հայ ժողովրդի շահերը ներկայացնող ամենահեղինավոր ու ազդեցիկ քաղաքական ուժը: Դրա վկայությունն այն էր, որ 1917 թ. համառուսաստանյան Սահմանադիր ժողովի Անդրկովկասի պատգամավորների ընտրության արդյունքում հայությունն իր քվեների 95 %-ը վստահել էր Դաշնակցությանը⁴:

1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո Անդրկովկասում զենստվոններ մտցնելու հարցի հետ կապված՝ առաջ էր քաշվել երկրամասի վարչական վերաբաժանման խնդիրը, որը վերաբերում էր ոչ միայն Ելիզավետպոլի ու Երևանի, այլև Թիֆլիսի նահանգին ու Կարսի մարզին: Այն համահունչ էր երկրամասը ներքին լայն ինքնավարությամբ վրացական, հայկական և թաթարական վարչական միավորների՝ կանտոնների բաժանելու ՀՅԴ ծրագրային պահանջներին: Սկիզբ առած քննարկումներում հայերի շահերը ներկայացնում էին Ալ. Խատիսյանը և Ավ. Շախաթունյանը: Վերջինս պատրաստել էր Անդրկովկասի վերաբաժանման նախագիծ, որը 1918 թ. լույս ընծայվեց որպես առանձին աշխատություն⁵: Նախագծում առաջարկվում էր՝ հաշվի առնելով վրացիների, հայերի ու թաթարների ազգագրական, տնտեսական և տեղագրական առանձնահատկությունները՝ մեծ մասամբ հայերով բնակեցված լեռնային շրջաններն առանձնացնել մահմեդականներով բնակեցված դաշտային շրջաններից: Դրա արդյունքում Հայկական բարձրավանդակի հյուսիս արևելյան մասում հիմնվելու էր Հայկական կանտոն՝ նրանում ընդգրկելով Երևանի նահանգը, Գանձակի նահանգի լեռնային՝ հայկական մասը, Թիֆլիսի նահանգից Ախալքալաքի գավառը, Բորչալուի գավառի հայկական մասը, Կարսի մարզի Կարսի ու Կաղզվանի գավառները: Հատուկ նշվում էր, որ հայկական և խառը բնակչությամբ վարչական միավորների միջև ընկած տարածքում ապրող այլազգի փոքրամասնությունն ինքն էր որոշելու իր քաղաքական կարգավիճակը: Համաձայն Ավ. Շախաթունյանի ներկայացրած տվյալների՝ Գանձակի, Ալեքսանդրապոլի, Երևանի նահանգները միասին ունեին 2113 հազար բնակիչ, որից 1299 հազարը՝ հայ (61 %), 636 հազարը՝ մահմեդական (30 %), 178 հազարը՝ ռուսներ և այլ ազգեր ($\approx 8,5$ %)⁶: Նշված նահանգների համար նախատեսվում էր հետևյալ ներքին բաժանումը՝ Գանձակի նահանգ՝ Քարվանսարայի, Գանձակի, Շուշիի, Զանգեզուրի գավառներով, Երևանի նահանգ՝ Նոր Բայազետի, Նախիջևանի, Շարուրի, Էջմիածնի, Երևանի գավառներով, Ալեքսանդրապոլի նահանգ՝ Ալեքսանդրապոլի,

4 Տե՛ս Փիրումևան Բ., Հայաստանը Հ.Յ.Դ. – Բոլշևիկ յարաբերությունների ոլորտում (1917–1921), Եր., Երևանի համալսարանի հրատ., 1997, էջ 6:

5 Տե՛ս Шахатунян А. Административный передел Закавказского края, Тифлис, типография «АШХАТАВОР», 1918:

6 Տե՛ս նույն տեղում, էջ 131–134:

Կողքի, Կարսի, Կաղզվանի, Լոռվա, Ախալքալաքի գավառներով⁷:

Անդրկովկասի վարչատարածքային վերաբաժանման ՀՅԴ նախագիծը բախվեց վրացիների ու թաթարների համառ դիմադրությանը: Վրացական բոլոր կուսակցությունները միասնական դիրքորոշում ունեին տարածքային հարցերում: Նրանք Վրացական կանտոնի սահմաններում էին տեսնում Լոռին, Ախալքալաքը, Բորչալուն, Արդվինը, Օլթին: Համախմբվելով Անդրկովկասի կոմիսարիատի մահմեդական մեծամասնության հետ՝ վրացական կողմը տապալեց երկրամասի վարչական վերաբաժանման ՀՅԴ նախագծի իրագործումը: Վիճելի հողեր համարվեցին Երևանի նահանգն ամբողջությամբ, Ելիզավետպոլի նահանգը (բացի Արեշի և Նուխիի գավառներից), Կարսի և Կաղզվանի գավառները, Թիֆլիսի նահանգի Բորչալուի և Ախալքալաքի գավառները:

Իսկ ահա Անդրկովկասի մահմեդականների նպատակն իրենց Թուրքիայից բաժանող հայկական «ամբարտակի» վերացումն էր⁸: Փաստորեն, վրացիներն ու թաթարները դեմ էին Հայկական կանտոնի ստեղծմանն ընդհանրապես: Այդ հանգամանքի, ինչպես նաև ազգագրական հիմքի վրա Անդրկովկասի գավառները սահմանազատելու հարցում ժամանակավոր կառավարության դանդաղկոտության, ապա՝ բոլշևիկյան հեղաշրջման արդյունքում ծրագրերը մնաց թղթի վրա⁹:

ՀՅԴ դիրքորոշումը Պետրոգրադի ժամանակավոր կառավարության հանդեպ ենթադրում էր համագործակցություն նրա տնօրինած կովկասյան վարչամեքենայի՝ Օզակոմի (ռուս.՝ Особый Закавказский Комитет – Անդրկովկասյան հատուկ կոմիտե) հետ, որը կյանքի էր կոչվել 1917 թ. մարտի 9-ին (նոր տոմարով՝ մարտի 22) Անդրկովկասն ու Օսմանյան կայսրությունից պատերազմի իրավունքով գրավված տարածքները կառավարելու նպատակով: Բայց Օզակոմի վարած քաղաքականությունը բնավ չէր նպաստում դեպի հայրենիք հայ գաղթականների վերադարձն ու Արևմտյան Հայաստանում նրանց վերաբնակեցումն ապահովելու, ինչպես նաև զինվորական, բանվորական ու գյուղացիական խորհուրդների միջոցով այնտեղ գյուղատնտեսական ու զինվորական կառույցներ հիմնելու ՀՅԴ ջանքերին¹⁰:

Արևմտյան Հայաստանի իրավիճակը բարելավելու և հաստատուն հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ էր երկրամասը դուրս բերել Օզակոմի իրավասությունից ու անմիջականորեն ենթարկել ժամանակավոր կառավարության վերահսկողությանը: Այդ հարցի վերաբերյալ ժամանակավոր կառավարության հետ բանակցելու նպատակով Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը Պետրոգրադ է գործուղում դաշնակցական գործիչներ բժ. Հ. Ջավրիյանին, Լիպ. Նազարյանցին, Ա. Չիլինգարյանին: 1917 թ. սեպտեմբերի 1-ին Մ. Վարանդյանին Ստոկհոլմից գրած նամակում անդրադառնալով նրանց գործունեությանը՝ Ռոստոմը նշում էր. «Ռուսաս-

7 Տե՛ս նույն տեղում, էջ 150–151:

8 Տե՛ս **Ավետիսյան Հր.**, Հայկական հարցը 1918 թվականին, Եր., «Բարձրագույն դպրոց», 1997, էջ 21: 9 **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է. հատոր: Արտասահման, Սատուն եւ Հայաստանի Հանրապետութիւն, Բ. հրատարակութիւն, Պէյրուօ, Համագգայինի Վահէ Սէթեան տպարան, 1979, էջ 130–132, 133–134:

10 Այս մասին տե՛ս **Սատունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914 – 1918): Տաճկահայոց գաղթաշարժը եւ անոնց դերը ՀՀ կազմութեան մէջ, Բոստոն, Ա. հատ., 1927, էջ 132–133:

տանի յեղաշրջումից անմիջապէս յետոյ յայտարարեցինք, որ Դաշնակցութիւնը ոչ մի առանձնակի, ազգային պահանջ չի դնելու մինչեւ Սահմանադիր ժողովի գումարումը, դժուարութիւններ չյարուցանելու համար ժամանակաւոր կառավարութեան հանդէպ»¹¹: ԸՅԴ դրսևորած նման ձկունության շնորհիվ հաջողվում է շահագրգռել ժամանակավոր կառավարությանը: Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Պ. Միլյուկովի և ռազմական նախարար Ալ. Կերենսկու հետ բանակցությունների արդյունքում 1917 թ. ապրիլի 6-ին ժամանակավոր կառավարությունն ընդունում է արտաքին գործերի նախարարության առաջարկությունն Արևմտյան Հայաստանի՝ պատերազմի իրավունքով գրավված մարզերի կառավարման մասին՝ Կովկասյան բանակի շտաբի հերթապահ գեներալ Եվգ. Վիշինսկու վրա դնելով հատուկ լիազորություններ: Գեներալ Ռոմանովսկին հետ է կանչվում Ընդհանուր նահանգապետի պաշտոնից: Շուտով՝ ապրիլի 26-ին (մայիսի 9-ին), ժամանակավոր կառավարությունն ընդունում է «Պատերազմի իրավունքով նվաճված Թուրքահայաստանի մարզերի կառավարման մասին» որոշումը, որով, հիմք ընդունելով 1907 թ. հոկտեմբերի 5/18-ի Հաագայի միջազգային կոնվենցիայի №№ 42-րդ և 43-րդ հոդվածները պատերազմի օրենքների ու սովորույթների մասին, Արևմտյան Հայաստանի համար, մինչև հաշտության դաշնագրով այդ մարզերի հարցի վերջնական լուծումը, հաստատվում է նոր կարգավիճակ: Ռուսական զորքի զինագրաված Արևմտյան Հայաստանի քաղաքացիական կառավարումը վերցվում է կովկասյան իշխանությունների, ինչպես նաև Կովկասյան ռազմաձակատի զինվորական իշխանությունների իրավասությունից և անմիջականորեն դրվում ժամանակավոր կառավարության տնօրինության ներքո: Այսպիսով, Արևմտյան Հայաստանն ուղղակիորեն ենթարկվում է ռուսական պետությանը և նրա կենտրոնական կառավարությանը¹²: Երկրամասի քաղաքացիական կառավարումը հանձնվում է Ընդհանուր կոմիսարին և նրան ենթակա վարչական մարմիններին: Արևմտյան Հայաստանի Ընդհանուր կոմիսարին առընթեր գործելու էր քաղաքացիական հարցերի գծով օգնականը, Ընդհանուր կոմիսարը ժամանակավոր կառավարությանը ներկայացնելու էր առաջարկություններ 1916 թ. հունիսի 5-ի ժամանակավոր կանոնադրության մեջ ցանկալի փոփոխություններ կատարելու համար, իսկ գյուղական և քաղաքային բնակչությունն օգտվելու էր ներքին ինքնավարության իրավունքներից: Բնակչության տնտեսական ինքնուրույնությունը վերականգնելու նպատակով Ընդհանուր կոմիսարը ժամանակավոր կառավարությանը պետք է ներկայացներ գանձվելիք հարկերի և տուրքերի չափերի հաստատման մասին ծրագիր, որի իրագործման արդյունքում գոյացած ֆինանսական միջոցներն, ինչպես նշված էր փաստաթղթում, պետք է տրամադրվեին միմիայն երկրամասի բնակչության կարիքներին: Յուրաքանչյուր մարզի կոմիսարին կից հիմնվելու էր մար-

11 **Ռոստոմ**, Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, Պէրյութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1999, էջ 634:

12 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 374, ց. 1, գ. 1, թ. 3-20: Տե՛ս նաև Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, т. 1. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментариев доктор юридических наук, профессор **Ю.Г. Барцеров**, М., 2002, док. N 298 и 300, с. 296-297, 298:

զային խորհուրդ¹³:

Ի կատարումն Արևմտյան Հայաստանի մասին Ժամանակավոր կառավարության որոշման՝ արևմտահայկական շրջանների կառավարման իրավունքն Ընդհանուր նահանգապետից վերցվում և տրվում է Ընդհանուր կոմիսարին: Մայիսի 15-ին այդ պաշտոնում նշանակվում է գեներալ-լեյտենանտ Պ. Ավերյանովը: Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգներում, որոնք ռուսական կառավարող շրջանակներում ձանաչված էին որպես «հնուց ի վեր հայկական (исконно армянскими)»¹⁴, Ընդհանուր կոմիսարի քաղաքացիական մասի օգնական է նշանակվում հայտնի ազգային-հասարակական գործիչ Հ. Զավրիյանը, ով պատմական այդ բարդ ժամանակահատվածում հետևողականորեն պաշտպանում էր հայոց ազգային շահերը Պետրոգրադում և Թիֆլիսում: Հայոց ազգային խնդիրների լուծման տեսանկյունից նրա նշանակման քաղաքական կարևորության մասին էր վկայում այն փաստը, որ պանթուրքիզմի կովկասյան պարագլուխները խստորեն բողոքում էին և պահանջում «փոխարինել Զաւրեանին մի ուրիշ հայով, եւ նրա կողքին աւելացնել մի ուրիշ օգնական՝ թիւրք»¹⁵: Նրանք դեմ չէին հայկական վեց վիլայեթների ինքնավարությանը՝ պայմանով, որ դրանք մնային Օսմանյան կայսրության սահմաններում, իսկ հայերի՝ իբրև փոքրամասնության, իրավունքներն ապահովված լինեին հիմնական օրենքով: Սակայն բարեբախտաբար, ժամանակավոր կառավարությունում տրամադիր էին շարունակելու պատերազմը մինչև հաղթական ավարտ՝ ամրապնդելով ռուսական պետության իշխանությունը պատերազմի իրավունքով նվաճված տարածքներում:

1917 թ. մայիսի 15-ին ժամանակավոր կառավարությունն Արևմտյան Հայաստանի Ընդհանուր կոմիսարին տալիս է հետևյալ ցուցումները.

- չկանխորոշելով Հայաստանի ապագա աշխարհագրական-քաղաքական սահմանները՝ Ասիական Թուրքիայի՝ պատերազմի իրավունքով նվաճված մարզերից զուտ հայկական համարել Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները,
- ելնելով երկրի տնտեսության վերականգնման անհրաժեշտությունից, ինչպես նաև հանուն արդարության, առաջնորդվելով թուրքերի կազմակերպած կոտորածների ու բռնագաղթի հետևանքով հայերի ոտնահարված իրավունքները վերականգնելու շահով՝ անհա-

13 Տե՛ս **Ավետիսյան Հր.**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 14: Հայոց պատմություն: ՀՀ ԳԱԱ ՊԻ, հատոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918 թ.), գիրք երկրորդ (1901 - 1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին), Եր., «Զանգակ» հրատ., 2015, էջ 562:

14 **Ռոստոմ**, Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, էջ 635:

15 Նույն տեղում: Նշենք, որ մինչ այդ Կազանում, ապա Մոսկվայում կայացած մահմեդականների համագումարներում Հ. Զավրիյանին հեռացնելու հարցն արդեն բարձրացվել էր: Ավելին, պահանջ էր ներկայացվել ժամանակավոր կառավարությանը Թուրքիայից գրավված տարածքներում պետական աջակցություն ցույց տալ մահմեդական բնակչությանը, կազմակերպել մահմեդական զինվորական կոմիտեներ ևն: Ազգային զարթոնքին տալով համաթրքական և համալամական բնույթ՝ Օսմանյան կայսրության և Կովկասի մահմեդականների ղեկավար շրջանակներում երկյուղում էին, թե պատերազմը ռուսական հաղթանակով ավարտվելու դեպքում թուրքերը կկորցնեն «ամբողջ հայկական նահանգները, թերևս ամբողջ Փոքր Ասիան»: Տե՛ս **Ավետիսյան Հր.**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 22: Տե՛ս նաև Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914 - 1918), հատ. II, աշխատասիրությունը **Ա. Պեյերյանի**, ֆրանս. թարգմ. **Վ. Պողոսյանի**, Եր., «Հայաստան», 2005, փաստ. N 396, էջ 37-38:

պաղ միջոցներ ձեռք առնել այդ մարզերը Ռուսաստան գաղթած հայերով վերաբնակեցնելու ուղղությամբ, հավասարապես արգելք չհարուցել այդ մարզերում բնակվելու նպատակով վերադառնալ ցանկացող նախկին թուրքահպատակ հայերի դեմ,

- նպատակ չունենալով առաջացնել որևէ բարդություն տեղում մնացած թուրքերի, քրդերի և լազերի նկատմամբ՝ բայց և այնպես, թիկունքի ռազմական ապահովության ու ազգամիջյան հնարավոր բարդությունները կանխելու նպատակով առանց հատուկ կարգադրության չթույլատրել թուրքական գործի հետ հեռացած թուրքերի, քրդերի և լազերի վերադարձը¹⁶:

Կառավարության ընդունած այս ծրագրի հեղինակն արտաքին գործերի նախարար Մ. Տերեշչենկոն էր: Այսպիսով, փաստորեն իրավական հիմք էր ստեղծվում Արևմտյան Հայաստանում ազգահավաքման և ինքնավարության համար:

Արևմտյան Հայաստանի մարզերում Ընդհանուր կոմիսար Պ. Ավերյանովի հրամանով կազմվեց երեք շրջան՝ 1. Էրզրումի՝ Էրզրում, Դերջան (Մամախաթուն), Աշկալա, Մանսուր, Հասան - կալա, 2. Խնուսի՝ Ալաշկերտ, Ղարաքիլիսա, Դիադին, Խնուս, Մանազկերտ, Բայազետ, 3. Վանի՝ Բերկրի, Արձեշ, Սարայ, Բաշկալա, Խոշաք, Վան գավառներով: Էրզրումի շրջանի կոմիսար նշանակվեց Յա. Գլտոովը, Վանի՝ Կ. Համբարձումյանը, Խնուսի՝ Ն. Նիկոլենկոն, իրենց հայ օգնականներով: Նման բաժանումը բխում էր նաև Սայքս - Պիկո - Սազոնով գաղտնի համաձայնագրերի պահանջներց, որոնցով պատմական Հայաստանի Խարբերդի, Սեբաստիայի ու Դիարբեքիի վիլայեթները պետք է անցնեին Ֆրանսիային¹⁷:

Արևմտյան Հայաստանի վերաշինության, վարչական, դպրոցական, կրթական, տնտեսական, մշակութային բնույթ ունեցող հարցերի լուծման, հուշարձանների պահպանության, բռնագաղթածների Երկիր վերադարձի հարցերը լայնորեն քննարկվեցին մայիսի 2 - 11-ը Երևանում կայացած Արևմտահայերի առաջին համագումարում: Նրա աշխատանքներին մասնակցած 59 պատվիրակները լիահույս էին, որ ազատ Ռուսաստանի ժողովրդավարական կառավարությունը պաշտպանելու էր իր հոչակած մեծ նշանաբանը՝ փոքր ազգերի ինքնորոշման իրավունքը: Համագումարն ընդգծեց, որ Հայրենիքի վերաշինությունը պետք է հասկացվի որպես գերազանցապես ազգային քաղաքական գործ, մեր ժողովրդի նոր վերածննդի կարևոր միջոցներից մեկը: Վերաշինության նպատակն էր վերադարձնել հալածանքի և այլ պատճառներով ցրված հայությանն իր Մայր Հայրենիք՝ այն համարելով ազգի պահպանության գրավականը, վարչական վերակառուցման հետ զարկ տալ տնտեսական վերաշինությանը՝ հայ ժողովրդին հնարավորություն տալով, որ նա կարողանա իր իսկ սեփական միջոցներով ապրելու, արդյունավորելու և ստեղծագործելու: Նախատեսվում էր վերաշինությունն իրականացնել պատերազմի տևողության ընթացքում և պատերազմից հետո: Անհրաժեշտ խնդիր էր համարվում պատերազմից հետո Երկիր տեղափոխել Կովկասում ապաստանած

16 Տե՛ս **Ռոստոմ**: Նամականի, էջ 635: **Ավետիսյան Հր.**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 15:

17 Տե՛ս **Ավետիսյան Հր.**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 15-16:

արևմտահայ փախստականներին, որոնց թիվը հասնում էր 300 հազարի, Հայրենիք վերադարձնել Միջագետք և այլուր աքսորված, քրդերի ու արաբների մեջ ցրված, Ամերիկայի, Արևմտյան Եվրոպայի, Բալկանյան երկրներում գտնվող հայերին: Երկրի վերաշինության և ազգապահպանության հիմնական երաշխիքը հավաքական և համերաշխ ջանքերի հանդես բերումն էր, ուժերի միասնությունը, հայ ազգի տոկունությունը¹⁸:

Նման բարենպաստ քաղաքական մթնոլորտում Արևմտյան Հայաստանը լցվում էր ազգային գաղափարներով տոգորված հայ պաշտոնյաներով: Ընդհանուր կոմիսարության տարբեր բաժանմունքներում ներգրավվում էին կարող ուժեր՝ ստավորականներ, գինվորականներ, համապատասխան մասնագետներ, երիտասարդություն: Ամբողջ երկրով մեկ բացվում էին կոմիսարության վարչաքաղաքացիական հաստատություններ, կազմակերպվում դպրոցներ, որբանոցներ: Հայն աստիճանաբար տեր էր դառնում իր հայրենիքում: Եվ դա արդյունք էր ոչ միայն Ժամանակավոր կառավարության ընձեռած պայմանների, այլև պատմական անհրաժեշտության գիտակցման, որովհետև ռուս պաշտոնյաներն Արևմտյան Հայաստանում իրենց դրսևորում էին գլխավորապես իբրև անտարբեր, բյուրոկրատ, երբեմն՝ որպես հայատյաց չինովնիկներ՝ այդպիսով ավելի շուտ խանգարելով, քան թե նպաստելով Արևմտյան Հայաստանի վերաշինությանը: Չնայած առկա դժվարություններին՝ 1917 թ. ընթացքում երկիր վերադարձավ մոտավորապես 150 հազար հայ¹⁹: Հայերի վերադարձը հայրենիք դուր չէր գալիս Կովկասի մահմեդականների ղեկավարներին ու վրացական մենշևիզմի պարագլուխներին. «Գրավված մարզերը, միևնույնն է, կանցնեն Թուրքիային, ուստի հարկ չկա այդ մարզերի կառավարումը կազմակերպելու նպատակով հսկայական միջոցներ ծախսել»²⁰, - պնդում էր Ն. Ժորդանիան:

1917 թ. հոկտեմբերին Թիֆլիսում կայացած ՀՅ Դաշնակցության կովկասյան երկրային ժողովը «Թուրքահայաստանի կոմիսարիատի մասին» որոշման մեջ «միանգամայն անհրաժեշտ» համարեց «կոմիսարիատի առաջնությունը և անմիջական կապը կենտրոնական կառավարության հետ»: Համազումարը դրեց նաև տարածքային հարց. մասնավորապես՝ պահանջվում էր նախկինում Էրզրումի վիլայեթի մաս կազմող ձորոխի հովիտը, Բաբերդը՝ Սպեր, Խոտորջուր հատվածով վերամիավորել Էրզրումի շրջանին: Սա, անշուշտ, արվում էր դեպի Սև ծով ելք ունենալու համար: Ավելին, համազումարը վճռականություն հայտնեց՝ պայքարելու «Թուրքահայաստանը վարչապես Կովկասին միացնելու դիտավորությունների դեմ, որը նկատվում էր կովկասյան զանազան շրջաններում»²¹:

Հաշվի առնելով պատերազմի շարունակման փաստը, բոլշևիկայի վտանգի աճը, պատերազմի ընթացքում ռուսական զորքերի գրաված տա-

18 Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912 - 1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2004, էջ 291-297: Տես նաև **Ավետիսյան Հր.**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 16-18:

19 Տե՛ս **Հովհաննիսյան Ռ. Գ.**, Հայաստանի Հանրապետություն, հատ I. Առաջին Տարին, 1918 - 1919, Եր., «Տիգրան Մեծ», 2005, էջ 16:

20 Տե՛ս **Ավետիսյան Հր.**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 20:

21 Տե՛ս նույն տեղում:

րածքները հետ հանձնելու մասին կանխատեսումները՝ կուսակցությունը չէր բացառում Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հարցում հնարավոր անակնկալները: Այս իմաստով ուշագրավ է դեռևս մայիսին Երևանում կայացած հայ զինվորականության համագումարում հնչեցված ՀՅԴ հայտարարությունն այն մասին, որ արևմտահայերի ինքնորոշման իրավունքը կախված է Կովկասյան ռազմաճակատի դրությունից²²: Արևմտյան ռազմաճակատում ռուսական զորքի ապրիլյան և հունիսյան անհաջող հարձակումները, դրանց հետևած Ժամանակավոր կառավարության հունիսյան ձգնաժամը, ապա՝ բոլշևիկյան հակապատերազմական ցույցն ամրապնդեցին այն համոզումը, որ Արևմտյան Հայաստանի հարցը պետք չէ կապել Արևելյան Հայաստանի հարցի հետ, այլ այն պետք է լուծել առանձին²³, ուստի Արևմտյան Հայաստանի համար պետք է բարձրացնել ինքնորոշման և անկախության հարցը՝ միաժամանակ ամրապնդելով քաղաքական կապերն ԱՄՆ-ի ու եվրոպական երկրների հետ՝ անհրաժեշտության դեպքում անկախ Արևմտյան Հայաստանի նկատմամբ միջազգային վերահսկողության երաշխիքներ ստանալու նպատակով: Սա ուժերի համախմբման ու միասնական պայքարի անհրաժեշտության գիտակցման արտահայտությունն էր՝ ընդդեմ կանխազգացվող մոտալուտ վտանգների:

Արևմտյան Հայաստանի հարցում ՀՅԴ այս մոտեցումն իր արտահայտությունը գտավ 1917 թ. ապրիլին արևմտահայ հայտնի գործիչ և օսմանյան պառլամենտի նախկին անդամ Գարեգին Բաստրմաջյանին (Արմեն Գարո) հատուկ առաքելությամբ ԱՄՆ ուղարկելու՝ Թիֆլիսի Հայոց Ազգային բյուրոյի նախաձեռնության մեջ, ապա սեպտեմբեր-հոկտեմբերին՝ Հայոց ազգային համախորհրդակցության որոշումներում, այնուհետև՝ «Թուրքահայաստանի մասին» խորհրդային հրովարտակի նախագծի առիթով բանակցություններում²⁴:

Արևմտյան Հայաստանի հարցում իր դիրքորոշումը ՀՅԴ-ն արտահայտեց նաև 1917 թ. հուլիսին Ստոկհոլմում հրավիրվելիք սոցիալիստական կուսակցությունների միջազգային կոնֆերանսին Ռոստոմի ներկայացրած հուշագրում (1917 թ. հուլիսի 26)²⁵: Ընդունելով հանդերձ «հաշտություն առանց տարածքային զինագրավումների» կարգախոսը՝ փաստաթղթում անհրաժեշտ էր համարվում հատուցում պահանջել այն երկրների և ժողովուրդների համար, որոնք տուժել էին մարդկային իրավունքների ոտնահարման ու միջազգային պայմանագրերի խախտման հետևանքով՝ շեշտելով, որ այդպիսի միջոցի կիրառումը կարող է զգալիորեն նվազեցնել ապագա պատերազմների վտանգը:

ՀՅԴ-ն դեմ էր, որ նվաճված տարածքների և ժողովուրդների նկատ-

22 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 3 մայիսի, 1917:

23 Տե՛ս նույն տեղում, 14 հուլիսի, 1917:

24 Այս մասին տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Հայկական հարցը և մեծ տերությունները 1914 - 1917 թվականներին, Եր., «Ջանգալ-97» հրատ., 2002, էջ 146-147: Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ ՊԻ, հատոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918 թ.), գիրք երկրորդ (1901 - 1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին), էջ 578, 606-610:

25 Հուշագիրը կազմվել էր ֆրանսերեն և կոչվում էր «Memorandum de la Federation Revolutionnaire Armenienne «Dachnakzoutioun»: Բոստոնի ՀՅԴ Կենտրոնական արխիվում պահպանվող այդ ուշագրավ փաստաթղթի ամբողջական տեքստը և դրա հայերեն թարգմանությունը տե՛ս Նիլթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, ԺԲ. հատոր, էջ 270-305:

մամբ վերականգնվել նախկին բռնակալական վարչակարգերի իշխանությունը: Առաջարկվում էր «Ո՛չ տարածքային գինագրավումներին ու բռնակցումներին» սկզբունքը կիրառել՝ հարգելով ճնշված ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը: Ըստ այդմ, կուսակցությունն Արևելյան Հայաստանի համար պահանջում էր ինքնավարություն Վրաստանի և Կովկասի թաթարների հետ ձևավորվելիք դաշնային հանրապետության կազմում, որն էլ, իր հերթին, ժողովրդավարական Ռուսաստանի մաս էր հանդիսանալու: Շեշտելով, որ Օսմանյան կայսրության սուլթանական և երիտթուրքական վարչակարգերի վարած հայաջինջ քաղաքականության հետևանքով է Արևմտյան Հայաստանը հայաթափվել, ՀՅ Դաշնակցությունը անընդունելի էր համարում այն Օսմանյան կայսրության ենթակայության տակ թողնելը: Կուսակցությունը պահանջում էր, որ միջազգային ժողովրդավարական ուժերը իրենց կարելին ի գործ դնեին՝ վերջ տալու համար հայոց դարավոր ողբերգությանը: Անհրաժեշտ էր, որ Հայաստանն ազատագրվեր և վերադարձվեր հայերին, որ տարագիր հայերն ապահովվեին հայրենի օջախները վերադառնալու և իրենց ազգային ճակատագիրը տնօրինելու համար անհրաժեշտ պայմաններով:

Հուշագրում ՀՅԴ-ն պահանջում էր ստեղծել ազատ Հայաստան, որը պետք է ընդգրկեր Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները և Կիլիկիան՝ բացառությամբ այն մահմեդական շրջանների, որոնք 1877 - 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական կառավարության վարչական վերաձևումների արդյունքում կցվել էին հայկական վիլայեթներին: Հուշագրի համաձայն, Հայաստանը հայտարարվելու էր չեզոք և ունենալու էր չեզոք պետության միջազգայնորեն երաշխավորված քաղաքական կարգավիճակ: Ազգամիջյան նոր բախումներից խուսափելու նպատակով կուսակցությունը հրատապ էր համարում Հայաստանում բնակվող ազգային տարբեր խմբերի միջև մասնակի տեղափոխություններ կատարելու, ինչպես նաև թուրքական իշխանությունների կողմից քաղաքական նպատակով Հայաստանում տեղավորված մահմեդական բնակչությանն իր նախկին բնակավայրերը վերադարձնելու հարցերը: ՀՅԴ-ն պահանջում էր նաև, որ իշխող թուրքական վարչակարգը հատուցեր հայ ժողովրդին պատճառած նյութական բոլոր վնասների համար, ինչպես նաև նյութական օգնություն տրամադրեր ազգային և կրոնական հալածանքների, տեղահանության ու կոտորածի ենթարկված թուրքահպատակ ազգային փոքրամասնություններին:

Թեև Ստոկհոլմի կոնֆերանսը հանգամանքների բերումով տեղի չունեցավ, սակայն Ռուստոմը հնարավորություն ունեցավ նրա կազմակերպիչ մարմնին ներկայացնելու ՀՅԴ պահանջները: Կոնֆերանսի նախօրեին չեզոք երկրների պատվիրակների ժողովում ընդունված հաշտության ծրագրի նախագծում Ռուստոմի ջանքերի շնորհիվ ձևակերպվեց դրույթ Արևմտահայաստանի տարածքային վերականգնման ու անկախության պահանջը պաշտպանելու վերաբերյալ՝ ներառյալ նրա տնտեսական զարգացման երաշխիքները, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի համար Կիլիկիայով դեպի Միջերկրական ծով ելքի ապահովումը: Այդ մասին է վկայում նրա 1917 թ. դեկտեմբերի 2-ի (հին տոմարով) թվակիր նամակը ՀՅԴ Ամե-

րիկայի Կենտրոնական Կոմիտեին²⁶:

Ռոստոմի ստոկիոլմյան հանդիպումների ընթացքում քննարկվեցին նաև Հայկական հարցի լուծմանը խոչընդոտող ներքին ու արտաքին դժվարությունները՝ Արևմտյան Հայաստանում հայ բնակչության փոքրաթիվ լինելը, երկրի կառավարման ձևը, Գերմանիայի դիրքորոշումն Արևմտյան Հայաստանի հարցում Ռուսաստանի և Քառյակ միության երկրների միջև մոտավորտ անջատ հաշտության բանակցությունների ժամանակ²⁷: Ռոստոմը չեզոք երկրների պատվիրակներին վստահեցնում էր, որ Արևմտյան Հայաստանում հայ բնակչության թիվը կարող էր ստվարանալ, եթե վերջինս հռչակվեր անկախ, և զանգվածային կոտորածներից ու բռնագաղթից փրկված հայերը վերադառնային Արևմտյան Հայաստան: Երկրի ապագա կառավարման հիմքում նա առաջարկում էր դնել լայն ապակենտրոնացման սկզբունքը, որը կարող էր դյուրացնել պետության կառավարումը: Ինչ վերաբերում է խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության երկրների միջև անջատ հաշտության բանակցություններում Գերմանիայի կողմից Ռուսաստանի նվաճած տարածքների վերադարձի հարցի հնարավոր բարձրացմանը, ինչի հետևանքով Հայկական հարցը կարող էր տուժել, Ռոստոմը հույս և միաժամանակ մտահոգություն էր հայտնում. «Ինչպես գերմանացիների զենքով նուաճուած Լեհաստանը ստանում է անկախութիւն, այնպես էլ ռուսների զենքով նուաճուած Հայաստանը պետք է ստանայ անկախութիւն: Մեր պահանջը աւելի իրաւացի է, քանի որ Վասպուրականը ազատուել է հայերի ապստամբական ուժերով. Վանը՝ արդէն ազատուած՝ դրուեր է Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Եթէ խնդիրը գալու լինի ինքնորոշման սկզբունքին, ժողովրդական քուէարկութեան, – հայ ժողովուրդը վաղուց իր քուէները տուել է անհամար դիակներով: Զինադադարի խնդիրը ու՛ր պետք է տանի ի վերջոյ: Շուարած եմ մնացել: Հոսանքը մեզ քշելու է. աշխատենք՝ ժայռերի չզարնուել»²⁸:

Հետիւտերվարյան ժամանակահատվածում ՀՅԴ գործունեության մյուս կարևոր ուղղությունը հայկական ազգային բանակի հիմքերը դնելու գործն էր՝ ռուսական բանակի կազմում հայկական զինվորական ստորաբաժանումներ ստեղծելու միջոցով, որոնք աստիճանաբար իրենց վրա պետք է վերցնեին ռուսական պետության անդրկովկասյան սահմանների պաշտպանության պարտականությունը: Այդ նպատակադրումը համահունչ էր ոչ միայն ժամանակավոր կառավարության «Բանակի ազգայնացման

26 Տե՛ս Ռոստոմ, Նամակահի, էջ 648–649: Նիլթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, ԺԲ. հատոր, էջ 307:

27 Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության արխիվի դիվանագիտական փաստաթղթերի վկայությամբ 1917 թ. կեսերին Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքվել էր գաղտնի պայմանագիր, համաձայն որի Գերմանիան պարտավորվել էր երաշխավորել այն ամենի ամբողջականությունն, ինչ մնացել էր Օսմանյան կայսրությունից՝ պայմանով, որ թուրքական կառավարությունն Արևմտյան Հայաստանի հատկացներ լայն ինքնավարություն: Գերմանական դիվանագետների կարծիքով, այդ քայլը պետք է նպաստեր Ռուսաստանի հետ բանակցություններին, քանի որ համապատասխանում էր ռուսական ժամանակավոր կառավարության քաղաքականության հիմնաքարը դարձած ազգերի ինքնորոշման սկզբունքին: Այդ մասին տե՛ս Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914 – 1918), հատ. II, փաստ. № 370, էջ 7–8:

28 Ռոստոմ, Նամակահի, էջ 648–649: Նիլթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, ԺԲ. հատոր, էջ 307: Տե՛ս նաև Փիլիմեան Ռ., նշվ. աշխ., էջ 16–18:

հիմնական դրույթները» օրենքով²⁹ դեռևս մայիսից սկսված բանակի ազգայնացման գործընթացին, այլև համապատասխանում էր Արևմտյան Հայաստանում ռուսական զորք պահելու Պետրոգրադի մտադրությանը: Բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդների համառուսաստանյան առաջին համագումարի 1917 թ. հունիսի 9-ի նիստում, պատասխանելով բոլշևիկների առաջնորդ Վլ. Լենինի այն հարցադրմանը, թե Ռուսաստանում ապրող այլազգիների թվում հայերին ևս լիակատար ազատություն ու անկախություն տալու համար պետք է Հայաստանից դուրս բերել ռուսական զորքը, ռազմական և ծովային նախարար Ա. Ֆ. Կերենսկին հայտարարեց. «Մենք չենք կարող հեռանալ Հայաստանից, որովհետև այդ ժամանակ Հայաստանից ոչինչ չի մնա, նա կկորչի քրդերի ու թուրքերի հրի ու սրի տակ»³⁰: Նշենք, որ այդ ելույթից երկու օր առաջ՝ հունիսի 7-ին Ա. Ֆ. Կերենսկին կարգադրել էր հայկական հրաձգային վեց գումարտակները վերածել գնդերի ու կազմել դիվիզիաներ³¹: Եթե ռուսական բանակի հրամանատարության համար այդ քայլը հիմնավորվում էր քայքայման վտանգի առաջ կանգնած Կովկասյան ռազմաճակատը պահելու ու ամրապնդելու շահերով, ապա հայ ժողովրդի համար խնդիրն ուներ կենսական նշանակություն: Դրա առանցքային բովանդակությունն Արևմտյան և Արևելյան Հայաստանի ու դրանց հայ բնակչության ռազմական պաշտպանության, ֆիզիկական անվտանգության ապահովումն էր արտաքին և ներքին վտանգներից՝ թուրքական բանակի հնարավոր ներխուժումից, թուրքերի և քրդերի հարձակումներից ու թալանից:

Այդ նպատակով 1917 թ. օգոստոսի 4-ին Լիպ. Նազարյանցը Պետրոգրադում դիմում է ռուսական իշխանություններին և հիմնավորելով հայկական զորամասեր ունենալու անհրաժեշտությունը՝ խնդրում, որ պատերազմի եվրոպական ռազմաճակատներում կռվող ռուսական բանակի հայ զինվորները տեղափոխվեն Կովկաս, և նրանց հենքի վրա, առանց ուշացնելու, ստեղծվեն նոր զորամասեր այն հաշվով, որ հնարավոր լինի կազմավորել երկու հայկական դիվիզիա՝ յուրաքանչյուրում ունենալով 4 գունդ, իսկ ամեն գնդում՝ երեք գումարտակ: Լիպ. Նազարյանցը նաև պահանջում էր, որ այդ ուղղությամբ կազմակերպչական աշխատանքներն ավարտելուց հետո հայկական դիվիզիաները միավորվեն մեկ բանակային կորպուսի մեջ, այսինքն՝ առաջ էր քաշում հայկական առանձին բանակային կորպուս ստեղծելու խնդիրը³²: Ջարգացնելով ռուսական բանակում ծառայող հայ զինվորներից հայկական բանակ կազմելու գաղափարը՝ Ռոստոմը համոզված էր, որ հնարավոր կլիներ ապահովել 150 հազարի հասնող զինուժ՝ թուրքական ճակատում արևմտահայ առանձին գնդերի

29 Օրենքում մասնավորապես նշվում էր. «Բանակի առողջացման, բանակային զորամասերում միատարրության, համախմբվածության, ազգի նկատմամբ բարոյական պատասխանատվության նպատակով ռազմական նախարարն անհրաժեշտ է գտնում բանակի վերակազմավորումը՝ դրա հիմքում դնելով ազգային տարածքային միասնությունը: Ազգայնացված բանակն ուղղվում է արտաքին թշնամուց երկրի պաշտպանության և պետության ներքին կյանքում կարգուկանոնի հաստատման գործին»: Տե՛ս Հայոց պատմություն: ՀՀ ԳԱԱ ՊԻ, հատ. 3, գիրք երկրորդ, էջ 575:

30 Քաղվածքը՝ ըստ **Ավետիսյան Հր.**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 18:

31 Տե՛ս **Ռոստոմ**, Նամականի, էջ 635-636:

32 Տե՛ս **Հարությունյան Ա. Հ.**, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Եր., ԳԱ հրատ., 1984, էջ 69:

հետ կողք – կողքի կռվելու համար³³:

Հայ գործիչներն այս հարցը բարձրացնում էին կրկնակի զգուշավորությամբ՝ գիտակցելով, որ ազգային զինուժի ստեղծման խնդիր դրել էին նաև այլ ժողովուրդներ, մասնավորապես՝ ուկրաինացիները: Ռուսական պետության համար 1917 թվականի սոցիալ – տնտեսական ու ռազմաքաղաքական բարդ պայմաններում դա բնավ ցանկալի չէր: Այնուամենայնիվ, գնահատելով հայ կամավորների ներքին բարձր կարգապահությունը, նրանց շարքերում դասալքության բացակայությունը, հեղափոխական անկայունության պայմաններում ռազմաճակատի գիծը հուսալիորեն պաշտպանելու մեծ պատրաստականությունը, ռուսական բանակի գերագույն գլխավոր հրամանատար Լ. Գ. Կոռնիլովը 1917 թ. հուլիսի 18-ին հրաման է արձակում հայկական զինվորական միավորում՝ բանակային կորպուս կազմավորելու մասին: Այս հարցում ակնառու էր Պետրոգրադի հայկական կոմիսարիատին կից զինվորական հանձնաժողովի ավանդը: Հանձնաժողովի կազմում էին Պետրոգրադի զինվորական օկրուգի գլխավոր շտաբի պետ, գեներալ – մայոր Լևոն Տիգրանյանը (սախազահ), փոխգնդապետներ Հովհաննես Տիգրանյանը և Նիկոլայ Մելիք-Փարսադանյանը: Հանձնաժողովի աշխատանքներում շուտով ներգրավվեց Արևմտյան ռազմաճակատից Պետրոգրադ տեղափոխված գեներալ Հակոբ Բագրատունին, ով փորձված զորավար էր և լայն կապեր ուներ ժամանակավոր կառավարության հետ³⁴:

1917 թ. օգոստոսի 4-ին Լ. Տիգրանյանը և Հ. Բագրատունին ռազմական նախարարի տեղակալ Բ. Մավինկովին ներկայացնում են մի ծրագիր, որով առաջարկվում էր հայկական բանակային կորպուսը ստեղծել ռուսական բանակային կորպուսի նման: Այդ գործում ներգրավվում է նաև Արևմտյան Հայաստանի Ընդհանուր կոմիսարի քաղաքացիական գծով օգնական Հ. Զավրիյանը: Նա էլ Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդում բարձրացնում է հայկական զինվորական կոմիսար ունենալու հարցը և այդ պաշտոնում առաջարկում Հ. Բագրատունու թեկնածությունը: Ազգային խորհուրդն ընդունում է Հ. Զավրիյանի առաջարկությունը՝ Հ. Բագրատունուն զինվորական կոմիսարի պաշտոնում նշանակելու մասին, որը ձանձվում է նաև ժամանակավոր կառավարության կողմից: Հ. Բագրատունու գլխավորությամբ հաստատվում է նաև զինվորական խորհուրդ, որի կազմում էին Լ. Տիգրանյանը, Ն. Մելիք-Փարսադանյանը, Մ. Պողոսյանը: Այդ ժամանակ ռազմաճակատում և թիկունքում կար 120 հզ. հայ զինվոր: Հայկական կոմիսարիատը լայն գործունեություն է ծավալում կովկասյան ռազմաճակատի կարիքների համար նրանց մոբիլիզացնելու և հայկական կորպուս կազմակերպելու ուղղությամբ:

Հայկական կորպուսի կազմավորման գործընթացում կարևոր քայլ էր 1917 թ. նոյեմբերի 14-ին ռուսական բանակի գերագույն գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ն. Դուխոնինի ստորագրած հրամանը իր ներքին կառուցվածքով, զորամասերի բնույթով ու զինվածության չափով

33 Տե՛ս Փիրումեան Ռ., նշվ. աշխ., էջ 25-26:

34 Տե՛ս Ավետիսյան Հր., Հայոց ազգային միասնության հաղթանակը, 1918 թվականի մայիս, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, էջ 21:

ռուսական բանակային կորպուսին նման հայկական կորպուս ստեղծելու և գեներալ – մայոր Թ. Նազարբեկյանին նրա հրամանատար նշանակելու մասին³⁵: Հատկապես՝ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, ռուսական ռազմաճակատների արագ քայքայման և գրավված երկրամասերի պարպման իրական վտանգի պայմաններում, հայկական զինվորական ստորաբաժանումներն է միայն, որ կարող էին դիմագրավել թուրքական բանակի վերահաս հարձակմանը: Մի քանի հազար հայեր, հիմնականում արևմտահայեր, պաշտպանում էին 400 կիլոմետր երկարությամբ ճակատը՝ Բաբերդից մինչև Վան ու Ատրպատական. Տրապիզոնի և Ճորոխի պաշտպանությունը դրված էր վրացական զորամիավորումների վրա: Մինչդեռ հայերի պաշտպանությանն ապավինած տարածքը մինչև 1917 թ. դեկտեմբերի 5-ի Երզնկայի զինադադարը պաշտպանում էր ռուսական 6 բանակային կորպուս՝ 7784 սպայով և 134587 հետևակ, 75196 հեծելազորային զինվորներով: Բոլոր կորպուսները միասին ունեին 353 հրանոթ, 1542 գնդացիր, հսկայական քանակությամբ ռազմապաշար³⁶:

Այսպիսով, Փետրվարյան հեղափոխությունից մինչև Հոկտեմբերյան հեղաշրջումն ընկած ժամանակաշրջանում ՀՅԴ գործունեությունը նպատակաուղղված էր Հայաստանի երկու մասերում հայկական պետականության հիմքերի ձևավորմանը՝ դրանց պատմական զարգացման առանձնահատկություններին համապատասխան: Այս իմաստով Անդրկովկասի վարչական վերաբաժանման վերաբերյալ կուսակցության ծրագիրն, ինչպես նաև հայ գաղթականներին Արևմտյան Հայաստանում վերաբնակեցնելու, հայկական նահանգների ինքնավարության և Կովկասյան ռազմաճակատի ապահովության ամրապնդման ուղղությամբ ձեռնարկումները լիովին համահունչ էին հայ ժողովրդի ազգային ձգտումներին, բխում էին պատմական անհրաժեշտության գիտակցումից:

Օսմանյան կայսրությունից բխող անխուսափելի վտանգի պայմաններում ՀՅ Դաշնակցությունը Հայաստանի երկու մասերի համար նպաստավոր քաղաքական կարգավիճակի և մեկ պետության սահմաններում հայ ժողովրդի անվտանգ ու կայուն զարգացման նախադրյալների ապահովումը, հայկական պետականության վերականգնումն ու ազգային իդեալների շուրջ հայ հասարակական-քաղաքական բոլոր ուժերի համախմբումը կապում էր ռուսական բազմազգ պետության պետա-քաղաքական ուժեղ համակարգի շարունակականության հետ:

Սակայն 1917 թ. հոկտեմբերյան իրադարձությունները Ռուսաստանում արմատապես փոխեցին դեպքերի օրինաչափ ընթացքը՝ հայ ժողովրդին և նրա ազգային կուսակցություններին կանգնեցնելով ճակատագրական մարտահրավերների առջև: Հոկտեմբերյան հեղաշրջումն Անդրկովկասում ընկալվեց որպես դավաճանություն Փետրվարյան հեղափոխության նպատակներին և սկզբունքներին, ինչով էլ պայմանավորված էր երկրամասի ազգային, սոցիալիստական կուսակցությունների դիրքորոշման հակախորհրդային ուղղվածությունը: Միաժամանակ, հակառուսական տրամադրություններ ունեցող վրացական մենշևիկների և թաթարական մուսա-

35 Տե՛ս նույն տեղում, էջ 22-23:

36 Տե՛ս Ավետիսյան Հր., Հայոց ազգային միասնության հաղթանակը, 1918 թվականի մայիս, էջ 26-27:

վաթականների համար հեղաշրջումը ցանկալի առիթ դարձավ և՛ Ռուսաստանից վերջնականապես անջատվելու, և՛ Անդրկովկասում ազգային-տարածքային տարանջատման խնդիրը լուծելու համար: Հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում նաև նրանց ջանքերով արագացավ Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի դուրսբերումը, աճեց դասավրությունը: Եվ սա այն դեպքում, երբ Կովկասյան ռազմաճակատի մերկացումը ոչ միայն սպառնալիք էր հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգությանն, այլև թուրքերի առջև բացում էր Անդրկովկաս տանող ճանապարհները:

Ռուսական պետականամետ ռազմաքաղաքական ուժերի հետ կայուն դաշինքի հասնելու համար պայքարում ՀՅ Դաշնակցությունը մնաց միայնակ և, բնականաբար, անկարող էր կանխել վերահաս վտանգները: Հայկականության դեմ ուղղված վրաց-թաթարական գործակցության և Անդրկովկասում վրացական հեգեմոնիզմի պայմաններում երկրամասի հայկական տարածքներում ոչ միայն զենստվո չմտցվեց, այլև դրանք հայտարարվեցին «վիճելի», ինչն էլ ավելի սրեց երկրամասի ազգամիջյան հակամարտությունները: Միաժամանակ, վրացի մենշևիկներն ու թաթար մուսավաթականներն անթաքույց դրսևորում էին թուրք-գերմանական խմբավորման հետ մերձենալու իրենց ձգտումը՝ պնդելով, որ Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև վերականգնվել 1914 թ. սահմանագիծն, իսկ Արևմտյան Հայաստանի ինքնորոշումն ապահովվել թուրքական պետության սահմաններում:

Հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով նաև ի չիք դարձավ Արևմտյան Հայաստանի ռուսական զինագրավման և ինքնավարության գաղափարը: Հայկական հարցի լուծումը տեղափոխվեց Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականության ոլորտ՝ ստորադասվելով «հաշտություն առանց զինագրավումների» սկզբունքին: Խորհրդային կառավարությունը հրաժարվում էր Ռուսաստանին բռնակցել պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունից ռուսական զորքերի նվաճած Արևմտյան Հայաստանը: Միևնույն ժամանակ, նա ձևականորեն ճանաչում էր Արևմտյան Հայաստանի հայ բնակչության ազատ ինքնորոշման իրավունքն՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն: Ընդ որում, անհրաժեշտ էր համարվում ռուսական Կովկասյան բանակի զորամասերի դուրսբերումն Արևմտյան Հայաստանից և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմավորումը՝ երկրամասի բնակիչների անձնական ու գույքային անվտանգությունն ապահովելու նպատակով: **Սակայն հենց ռուսական զորքերի դուրսբերումն էր, որ տվյալ պատմաշրջանում անհնարին դարձրեց արևմտահայերի ինքնորոշման իրավունքի իրագործումը:**

Լիլիթ Հր. Հովհաննիսյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ու պատմագրության հիմնահարցերը: 1 մենագրության, 5 գիտամեթոդական աշխատության, ավելի քան 30 գիտական հոդվածների հեղինակ է:

THE CHALLENGE OF STATEHOOD

Part one. AR Federation and the political status of both parts of Armenia in 1917

Lilit Hr. Hovhannisyan

Key words – ARF Dashnaksutyun, Western Armenia, Eastern Armenia, Transcaucasia, autonomy, independence, the right of nations to self – determination, H. Zavriyan, Rostom (Stepan Zoryan), Russian Provisional Government, Armenian question, Armenian separate army corps.

In 1905 «Caucasus Project» ARF Dashnaksutyun brought up a proposal out of necessity to settle of the issue of Western and Eastern Armenia’s political status separately. In 1907 the idea was fixed in the Party program, and in 1914 it was approved by the Eighth General Assembly of ARF. It was set a task to achieve broad autonomy for Western Armenia within the Ottoman state, and to demand autonomy for Eastern Armenia within the Federal Republic of Transcaucasia; the latter was to be an integral part of the Russian Federative Republic. After annexation of Western Armenia by the Russian army in 1915 – 1916 only one change was made in demand of autonomy for Western Armenia – that is the word «Ottoman» was replaced by the word «Russian», respectively. The claim of Western Armenia’s autonomy did not contradict to idea of it’s independence, moreover it was considered to be a feasible intermediate phase on the way of the real preparing for and attaining independence for the Western Armenia.

The victory of the February revolution in Russia in 1917 created prerequisites for the realization of the program aims of ARF Dashnaksutyun. Thanks to the efforts of ARF, in particular H. Zavriyan, Lip. Nazaryants and A. Chilingirian, on April 26 (May 9) Russian Provisional Government adopted decision «On governance of the war by right conquered regions of Turkish Armenia», by which the civil administration of Russian army conquered Western Armenia was withdrawn from the Caucasian authorities, as well as military authorities of Caucasian Front and was handed over directly to the Provisional Government henceforth the final decision on the province’s status due to the peace treaty. So, a status of a separate administrative unit in the Russian state was passed to Western Armenia. This decision, as well as the instructions, given by the Provisional Government on May 15 to the General Commissioner of Western Armenia, established a legal basis to consolidate Armenians in western armenian territories and to achieve the autonomy. In late 1917, about 150 thousand Armenian refugees returned to their homeland – Western Armenia. The socio – economic, political and cultural life of Western Armenians became organized and noticeably active.

It was important also to ensure the physical security and protection of Armenian population and Armenia not only from Turk’s and Kurd’s attacks and rob-

bery, but also from the possible attacks of the Turkish army. For this purpose ARF Dashnaktsutyun (Rostom (Stepan Zoryan) and Lip. Nazaryants) made efforts to move the Armenian soldiers and officers of the Russian army to Armenia and create an Armenian separate army corps, due to the Provisional Government's policy of the nationalization of the army. So was founded the Armenian national army. This played a decisive role not only to save the Armenian people from physical extermination during the Turkish invasion to Western Armenia and Transcaucasia in 1918, but also to restore the independent statehood on the small part of historical Armenia.

The problem of the political status of Eastern Armenia was essential as well for ARF. In the summer of 1917 the Party brought forth a project to the Russian central and Transcaucasian local authorities on administrative repartition of Transcaucasian region, worked out by Av. Shakhaturyan. According to the project, it was proposed to separate mountainous regions largely populated by Armenians from the Muslim – dominated lowland regions, so as to found an Armenian Canton in the Armenian highlands, including therein the Erivan Province, the mountainous – Armenian part of the Elizavetpol Province, the Akhalkalaki county from Tiflis Province, the Armenian part of the Borchaloo county, Kars and Kaghzvan counties of the Kars region. The Georgians and the Tatars were against the creation of the Armenian Canton, having territorial claims towards the Armenian territories, while the Provisional Government did not realize it because of its short existence.

In conditions of the Russian army's defeats in Western Front, as well as the Provisional Government's political crisis, the increasing Bolshevik threat the ARF Dashnaktsutyun raised the issue of self – determination and independence of Western Armenia, strengthening political ties with the US and European countries in order to obtain guarantees of international supervision, if necessary. But the realization of this idea became impossible in 1917 because of the Bolshevik government's yielding policy towards Quadruple Alliance countries in the name of prompt signing of separate peace treaty, as well as the German – Turkish military and diplomatic pressure, the withdrawal of Russian troops from Western Armenia, the insufficiency of human, economic and military resources therein.

ВЫЗОВ ГОСУДАРСТВЕННОСТИ

Часть первая. АРФ Дашнакцутюн и вопрос политического статуса обеих частей Армении в 1917 году

Лилит Гр. Оганисян

Ключевые слова – АРФ Дашнакцутюн, Западная Армения, Восточная Армения, Закавказье, автономия, независимость, право наций на самоопределение, А. Завриян, Временное правительство России, Армянский вопрос, Армянский отдельный армейский корпус.

«Кавказский проект» АРФ Дашнакцутюн 1905 года обосновал необходимость разрешения вопроса политического статуса Западной и Восточной Армении по отдельности. В 1907 г. эта идея была закреплена в программе партии, а в 1914 г. – утверждена на восьмом Общем собрании. Была поставлена задача достичь широкой автономии для Западной Армении в пределах османского государства, а для Восточной Армении – добиться создания Закавказской федеративной республики, которая должна была стать нераздельной частью Федеративной республики России. После аннексии большей части Западной Армении русской армией в 1915 – 1916 гг. слово «османского» соответственно было заменено словом «русского». Требование автономии не только не противоречило идее независимости, но и рассматривалось как вводная фаза на пути реальной подготовки к достижению независимости Западной Армении.

Победа Февральской революции 1917 г. в России возникли предпосылки для осуществления программных целей АРФ Дашнакцутюн. Благодаря усилиям партии и в особенности А. Заврияна, Лип. Назарянца и А. Чилингаряна, Временное правительство 26 апреля (9 мая) 1917 г. приняло постановление «Об устройстве областей турецкой Армении, занятых по праву войны», согласно которому гражданское управление занятой русской армией территории Западной Армении изымалось из ведения кавказских властей, а также военных властей Кавказского фронта и передавалось в непосредственное ведение Временного правительства вплоть до окончательного определения положения турецкой Армении мирным трактатом. Следовательно, Западной Армении был предоставлен статус отдельной административной единицы в составе российского государства. Этим постановлением, а также указаниями от 15 мая, данными Временным правительством Генеральному комиссару Западной Армении, создавался юридический базис для консолидации армян в западноармянских областях и создания армянской автономии. В конце 1917 г. около 150 тыс. армян – беженцев вернулись на свою родину – в Западную Армению. Кроме того, организовалась и заметно оживилась социально – экономическая, политическая и культурная жизнь западных армян.

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

ԲԵՆԵՎՈՐԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ, 2017

ՎԷՍՏԱԿԱՆԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՒՄԱՆ

Важное значение имели также обеспечение физической безопасности Армении и армянского населения от возможного наступления войск Турции, а также от нападений и грабёжей турков и курдов. С этой целью деятели АРФ Дашнакцутюн (Ростом (Степан Зорян) и Лип. Назарянц), в соответствии с политикой национализации армии, проводимой Временным правительством, прилагали усилия для перемещения солдат и офицеров армян русской армии в Армению и создания Армянского отдельного армейского корпуса. Так была создана основа будущей армянской национальной армии, что имело решающее значение не только для спасения армянского народа от физического истребления во время турецкого нашествия в 1918 г., но и в деле восстановления независимой государственности на маленькой части исторической Армении.

Вопрос о политическом статусе восточных армян также имел важное значение. Летом 1917 г. партия представила российским центральным и закавказским местным властям проект административного передела края, составленный Ав. Шахатуняном. Согласно этому проекту, предлагалось отделить горные районы, населённые преимущественно армянами, от равнинных районов, населённых мусульманами, и на северо-восточной части Армянском нагорья основать Армянский кантон, включая Эриванскую губернию, горную – армянскую часть Елизаветпольской губернии, Ахалкалакский уезд Тифлисской губернии, армянскую часть Борчалинского уезда, Карсский и Кагызванский уезды Карсской области. Грузины и татары выступили против создания Армянского кантона ввиду претензий в отношении армянских территорий, а Временное правительство не успело осуществить этот проект по причине своего короткого существования.

В условиях поражений русской армии на Западном фронте, политического кризиса Временного правительства и возрастающей большевистской угрозы, АРФ Дашнакцутюн выдвинул вопрос самоопределения и независимости Западной Армении, укрепив политические связи с США и европейскими государствами – с целью получения, в случае необходимости, гарантий международного контроля над Западной Арменией. Но эту идею невозможно было осуществить по причине уступчивой политики большевистского правительства в отношении государств Четверного союза, а также – германо – турецкого военно – дипломатического давления, вывода русского войска из Западной Армении, недостаточности наличествовавших там человеческих, экономических и военных ресурсов.